№ 133 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 11 ՅՈՒԼԻՍԻ

1918
ՔԱՌԱՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 11 ՅՈՒԼԻՍԻ № 133

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջ
Գաւառում —24 ր., արտասահման— 40 ր.
Թիֆլիսում ամսական 7 րուբլի։
Առանձին համարները Թիֆլիսում և գաւառներում 35 կ., երկաթուղային կայարաններում 40 կոպ.։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Tiflis, Rédaction „Mschak"
Соломоновская, 21.

Խմբագրատան տելէֆօն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են՝ հօլկատում իւրաքանչիւր տողատեղին 50—30 կոպ., հօլկատից առաջ՝ 60—40 կոպ.։

Հասցէն փոխելու համար պէտք ուղարկել թէ հին հասցէն և թէ 1 րուբլի։

«Մշակի» խմբագրութիւնը, աշխատակիցները և գրաշարները

խորին վշտով յայտնում են ի գիտութիւն հայ հասարակութեան, որ ամսիս 6-ին, երեկոյեան ժամը 8-ին, իր բնակարանում ոճրագործների ձեռքով նենգօրէն սպանվեց Թերթիս երկարամեայ անխոնջ խմբագիր և հրապարակախօս

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆԸ

Հոգեհանգիստը տեղի կունենայ հինգշաբթի և շաբաթ օրերը, յուլիսի 11-ին և 13-ին, եր. ժ. 8-ին հանգուցեալի բնակարանում (Уг. Жуковской ул. и Коссого пер. № 23/1).

Յուղարկաւորութիւնը կիրակի, յուլիսի 14-ին, առ. ժ. 10-ին, հանգուցեալի բնակարանից դէպի Մուղնու ս. Գէորգ եկեղեցին։

Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը, «Մշակի» պանթէօնում։

Եղիսաբէթ և Սուրէն Առաքելեանները սրտի անհուն կսկիծով յայտնում են՝ առաջինն իր ամուսնու, երկրորդն իր հօր՝

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

եղեռնական մահվան մասին, որ տեղի ունեցաւ յուլիսի 6-ին, շաբաթ, երեկոյեան ժամը 8-ին. Հոգեհանգիստը տեղի կունենայ հինգշաբթի և շաբաթ օրերը, հանգուցեալի բնակարանում (уг. Жуковской ул. и Коссого пер. № 23/1).

Յուղարկաւորութիւնը կիրակի, յուլիսի 14-ին, առ. ժ. 10-ին, հանգուցեալի բնակարանից դէպի Մուղնու ս. Գէորգ եկեղեցին։

Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը, «Մշակի» պանթէօնում։

Թաղման Կարգադրիչ Յանձնաժողովը յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, որ յուլիսի 6-ին, երեկ. ժամը 8-ին, իր բնակարանում ոճրագործների ձեռքով դաւաճանօրէն սպանվեց «Մշակ» լրագրի երկարամեայ խմբագիր և յայտնի հասարակական գործիչ և հրապարակախօս

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆԸ

Հոգեհանգիստը տեղի կունենայ հինգշաբթի և շաբաթ օրերը, յուլիսի 11-ին և 13-ին եր. ժ. 8-ին հանգուցեալի բնակարանում (Жуковская ул. № 23.)

Յուղարկաւորութիւնը կիրակի, յուլիսի 14-ին, առ. ժ. 10-ին, հանգուցեալի բնակարանից դէպի Մուղնու ս. Գէորգ եկեղեցին։

Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը, «Մշակի» պանթէօնում։

Թաղման Կարգադրիչ Յանձնաժողով

(Հ. ու. կ.) 548. 3—1

Հայ Նպաստամատոյց Ընկերութեան Վարչութիւնը

յայտնում է հասարակութեանը Ընկերութեան հիմնադիր, «Մշակի» խմբագիր-հրատարակիչ, հրապարակախօս և հասարակական գործիչ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

եղեռնական մահը, որ տեղի ունեցաւ յուլիսի 6-ին, երեկ. ժ. 8-ին, չարագործների ձեռքով իր բնակարանում։ Հոգեհանգիստը տեղի կունենայ հինգշաբթի և շաբաթ օրերը, յուլիսի 11-ին և 13-ին, եր. ժ. 8-ին հանգուցեալի բնակարանում (уголъ Жуковской и Коссой улицъ).

Յուղարկաւորութիւնը կիրակի, յուլիսի 14-ին, առ. ժ. 10-ին, հանգուցեալի բնակարանից դէպի Մուղնու ս. Գէորգ եկեղեցին։

Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը, «Մշակի» պանթէօնում։

Արշակ Առաքելեան և Հեղինէ Տոստաճեան սրտի անհուն կսկիծով յայտնում են իրանց Թանգագին եղբօր՝

Համբարձում Առաքելեանի

եղեռնական մահվան մասին, որ տեղի ունեցաւ յուլիսի 6-ին, շաբաթ, երեկ. ժամը 8-ին չարագործների ձեռքով։

Յուղարկաւորութիւնը կիրակի, յուլիսի 14-ին, առ. ժ. 10-ին, հանգուցեալի բնակարանից դէպի Մուղնու ս. Գէորգ եկեղեցին։

Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը, «Մշակի» պանթէօնում։

Սալոմէ Հէքիմեան և Սոֆիա [illegible] սրտի խորին ցաւով յայտնում են առաջինն իր փեսայի, իսկ երկրորդն իր քրոջ ամուսնու՝

Համբարձում Առաքելեանի

եղեռնական [illegible] մասին, որ տեղի ունեցաւ յուլիսի 6-ին, շաբաթ, եր. ժամը 8-ին, չարագործների ձեռքով։

Յու[illegible] կիրակի, յուլիսի 14-ին, առ. ժ. 10-ին, հանգուցե[illegible]դէպի Մուղնու ս. Գէորգ եկեղեցին։

Թ[illegible] գերեզմանատանը, «Մշակի» պանթէօնում։

Մ[illegible]ները իրանց որդիներով սրտի անհուն ցաւով [illegible] իր եղբօր, իսկ երկրորդն իր աներորդու՝

[illegible]արձում Առաքելեանի

եղեռնական [illegible]մասին, որ տեղի ունեցաւ յուլիսի 6-ին, շաբաթ, եր. ժ. 8-ին, չարագործների ձեռքով։

Յուղարկաւորութիւնը կիրակի, յուլիսի 14-ին, առ. ժ. 10-ին, հանգուցեալի բնակարանից դէպի Մուղնու ս. Գէորգ եկեղեցին։

Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը, «Մշակի» պանթէօնում։

Հայաստանի Վերածնութեան Յանձնաժողովը և Հայ Նպաստամատոյց Ընկերութեան վարչութիւնը յայտնում են հայ հասարակութեան Յանձնաժողովի և Ընկերութեան հիմնադիր, փոխ նախագահ, «Մշակի» խմբագիր հրատարակիչ, հրապարակախօս և հասարակական գործիչ՝

Համբարձում Առաքելեանի

ողբերգական մահը, որ տեղի ունեցաւ յուլիսի 6-ին երեկ. ժ. 8-ին չարագործների ձեռքով իր բնակարանում։

Հոգեհան[illegible]ր, հինգշաբթի, յուլիսի 11-ին, և շաբաթ, յուլիսի 13-ին, երեկ. ժ. 8[illegible] բնակարանում (Жуковская, № 23).

Յու[illegible] կիրակի, յուլիսի 14-ին, առ. ժ. 10-ին հանգուցեալի բնակարա[illegible] Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմա[illegible], «Մշակի» պանթէօնում։

547. 3—1

Հայ Ժո[illegible]կցութեան Կենտրոնական Կոմիտէն յայտարարում է [illegible] 6-ին չարագործների ձեռքով սպանվեց

ՀԱ[illegible]ՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆԸ,

Կուսակցութեան հիմնադիրներից մէկը և Կենտրոնական Կոմիտէի փոխնախագահը։ Կուսակցութեան անդամներն ու համակիրները հրաւիրվում են հանգուցեալի հոգեհանգիստներին և թաղմանը։

(Հ. ու. կ.) 546. 3—1

ՉԸ ՊԷՏՔ Է ՄԹԱԳՆԵԼ

Հ. Առաքելեանի սպանութիւնից չորս օր է անցել, սակայն այսօր այդ քստմնելի ոճրի մասին մենք գիտենք նոյնքան, որքան գիտէինք առաջին օրը։ Բացի մի քանի աննշան մանրամասնութիւններից, ոչ մի նոր փաստ կամ նոր տուեալ երևան չեկաւ՝ լոյս սփռելու այս՝ դեռ ևս մութ գործի վրա։ Եւ այսօր մեզ համար պարզ է միմիայն այն, ինչ առաջ էլ պարզ էր. դա այն է, որ սպանութիւնը կատարված է քաղաքական հողի վրա։

Մեր հանգուցեալ խմբագիրը անձնական թշնամիներ չունէր և չէր էլ կարող ունենալ, ոչ էլ հարստութեան տէր էր և ոչ առաւել ևս հասարակութիւնների գումարներ էր պահում իր մօտ, որպէսզի կարելի լինէր ենթադրել, ինչպէս այդ—միամտաբար թէ ոչ-միամտաբար—անում են ոմանք, որ սպանութիւնը անձնական հողի վրա է կատարված կամ թէ կողոպտելու նպատակով։ Այդ ենթադրութիւնները տեղ են գտել մամուլի մի մասում, այն մասում, որը առանձնապէս պէտք զգուշանայ նման ենթադրութիւններից։ Երկու կարծիք չէ կարող լինել նաև լաւագոյն դէպքում տղայամիտ, իսկ աւելի շատ պրովոկացիօն մի լուրի մասին, որը այս օրերս յայտնի չէ թէ ում ձեռքով ցանվում է հասարակութեան մէջ, թէ քստմնելի ոճիրը իբր կապ ունի մեր թերթի գրաշարների կողմից յարուցված տնտեսական պահանջների հետ։ Գիտակից և պատուաւոր բանուորը չէ, որ կարող է ձեռնամուխ լինել այդպիսի մի ոճրագործութեան և ոչ էլ Հ. Առաքելեանն էր ընդունակ թշնամական դիրք բռնելու դէպի բանուորը։ Այդպիսի մի կասկած յայտնելը մեր բազմամեայ աշխատակից գրաշարների մասին յանցանք է և աւելի ևս մի ոճիր։ Զարշելով երես ենք դարձնում այդ լուրից։

Եթէ այսօր, ինչպէս և երէկ, մենք տուեալ և փաստ չունենք՝ անվերապահօրէն, առանց տատանվելու և առանց բաւարարութիւն տալու իրաւաբանական կաշկանդիչ պահանջներին՝ մատնանշել թէ ում ձեռքով և ում թելադրանքով է կատարված ոճիրը, թէ որ բովում կարող էր մշակվել զարշելի դիտաւորութիւնը և թէ ով է պատասխանատու Հ. Առաքելեանի շիրմի առաջ. եթէ այդ հնարաւորութիւնը դեռ ևս չը կայ, այսու հանդերձ չը պէտք է մթագնել հասարակական կարծիքը զանազան մտացածին, դիտաւորեալ և ոչ-դիտաւորեալ լուրերով և ենթադրութիւններով։ Մանաւանդ որ ինքը հասարակութիւնը շատ լաւ կարողացաւ այս խնդրում տարբերել սևը սպիտակից, մտացածինը բնականից։

Եւ հասարակութեան խիղճն ուժգնօրէն, բուռն կերպով վրդովված է։ Հարիւրաւոր ցաւակցութիւնները և բողոքի ու զայրոյթի արտայայտութիւնները, որ այս օրերս առաւօտից մինչև երեկոյ ստանում են խմբագրութիւնս և հանգուցեալի ընտանիքը, ցայտուն կերպով ապացուցում են այդ։

Այլ կերպ չէր էլ կարող լինել։ Հ. Առաքելեանի սպանութիւնը խոր հասարակական նշանակութիւն ունի, իբրև մի կօշմարային հետևանք բարբարոսական այն վակխանալիայի, որ տարիներից ի վեր ստեղծված է մեր իրականութեան մէջ, և իբրև մի նախադուռն էլ աւելի մղձաւանջային, էլ աւելի հեղձուցիչ մթնոլորտի ստեղծման, որ կատաստրոֆային վտանգ է սպառնում հայ հասարակութեանը։

Հասարակական խիղճը չէ կարող հաշտվել մի իրականութեան հետ, երբ գաղափարական վարդապետութիւնը, մտքի և խօսքի ազատութիւնը, վարդապետողը, հրապարակախօսը, գրողի խիղճը մաուզերաւորների ձեռքով բռնադատվում են և կասեցվում։ Դա կուլտուրական և բարոյական անկման ծայր աստիճանն է, և հասարակական օրգանիզմի առողջ կենսական նիւթերը չեն կարող հանդուրժել մահաբեր ախտի գոյութեանը, չեն կարող պահանջ չը զգալ դուրս ժայթքեցնելու թունաւոր թարախը։

Եւ հասարակական խիղճը չի հանգստանայ՝ մինչև որ չը պարզվի ոճրագործութեան ամբողջ պատկերը, մինչև հասարակութիւնը հնարաւորութիւն չունենայ իր խօսքն ասելու ոճրագործներին և նշաւակելու նրանց սև արարքը։

Դատաքննիչ իշխանութեան վրա հասարակութիւնը հրամայողական պահանջ է դնում գործադրել ամեն ինչ, անել ուժերից վեր՝ երևան հանելու Հ. Առաքելեանի սպանողներին։

Սակայն այդ բաւական չէ։ Քանի որ պարզ է, որ սպանութիւնը կատարված է քաղաքական հողի վրա և քանի որ տերրօրի սիստեմը անցեալում ընդունված է եղել յեղափոխական կուսակցութիւններից, ուստի և յեղափոխական կուսակցութիւններն են, որ պիտի հանդէս գան նպաստելու ոճրագործներին երևան հանելու գործին և պարզելու մասսաներին, որ Հ. Առաքելեանի սպանութիւնը միանգամայն դուրս է տերրօրի այն իմաստից, որ տալիս են նրան յեղափոխական կուսակցութիւնները։ Պէտք է պարզել, որ սա տերրօր չէ, այլ սև-հարիւրեակային մի ակտ, և այն էլ ամենավատ տեսակի, քանի որ ռուս միապետութեան իսկ սպիտակ տերրօրը բացասում էր հնարաւորութիւնը մահացնել մօտ 70 տարեկան ծերունուն։ Պէտք է պարզ լինի մասսաների համար, որ Հ. Առաքելեանի սպանութիւնը նոյն դասին է պատկանում, ինչ որ Հերցենշտէյնի, Իոլլոսի, Արփիար Արփիարեանի և այլոց սպանութիւնները։

Առաւել ևս այն կուսակցութիւնը, որ յաւակնութիւն ունի իրան սօցիալիստական և յեղափոխական համարելու և որը այսօր իր պաշտօնական օրգանում հնարաւոր է համարում այլիմաստ նշանակութիւն տալ քստմնելի ոճրագործութեանը, մի կուսակցութիւն, որի դէմ էր գլխաւորապէս ուղղված հանգուցեալ Առաքելեանի վերջին տարիների քաղաքական գործունէութիւնը, պէտք ամենից շատ ջանք թափէ պարզելու իրողութիւնը՝ թէկուզ այն նկատումով, որ իր պասսիվութեամբ առիթ չը տայ հասարակութեանը այդ կուսակցութեան յանցանքներին հայութեան հանդէպ աւելացնելու ամենասոսկալին, ամենաքստմնելին։

Պէտք է ամենայն ուղղամտութեամբ ջանալ պարզել իսկական պատկերը, այլ ոչ թէ մթագնել և մոլորեցնել։

Թիֆլիսաբնակ ղարաբաղցիներից ընտրված կոմիտէն հրաւիրում է այն հայրենակիցներին, որոնք կամենում են մասնակցել իրանց ծննդավայրի պարծանք, անվեհեր հրապարակախօս և անյաղթ հասարակական գործիչ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

դագաղին պսակ դնելուն, բարեհաճեն ամեն օր, ցեր. ժ. 11—1-ը և եր. ժ. 5—7-ը, դիմել Գրական-Գեղարվեստական Սալոնը՝ (Головинскій пр. № 41) հերթապահ տ. տ. Մարիամ Կաֆեանին, Աննա Տէր-Միքայէլեանին։ ԿՈՄԻՏԷ

տռ. (ա. օ.) 545. 3—1

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՄԲԻ ԹԱՏՐՈՆ
(Թիֆլիսի ամառ. Ժողովարան)
Այսօր, հինգշաբթի, յուլիսի 11 ին,
Յ. ՈՍԿԱՆԵԱՆԻ դրամատիկ դերասանական խումբը կը ներկայացնէ Վ. Վաղարշեանի կ. Հ. Դրամ. Ընկ. մրցանակաբաշխման ժիւրիի կողմից մրցանակի արժանացած՝
„ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ“
պիէսը 4 արար.։
Մասնակցում են.—Տ. տ. Արուս-Ոսկանեան, Աստղիկ, Մարգօ, Ցամիկ, պ. պ. Աբգարեան, Ալահվերդեան, Միրզոյեան, Ոսկանեան և ուրիշներ։
Սկիզբը երեկ. ժ. 8 ին
Վաղը «ԱՐՇԻՆ ՄԱԼ-ԱԼԱՆ»։
տռ. 549. 1—1

Բացված է
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՈՒԺԱՐԱՆ
Մշտական մահճակալներով
ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ԴՕՆԽԻՆԻ
Նախկին երկար-ժամանակեայ ասիստենտ Պարիզի և Վիեննայի համալսարանների աչքի հիւանդութիւնների կլինիկաների,
ընդունում է
Աչքի հիւանդութիւններ
ամենօրեայ ցերեկվայ ժամը 9-ից մինչև 12½-ը և երեկ. 4—7½-ը. Միքայէլեան պր. 141 («[illegible]» մօտիկ)։ Տունը և վիրաբուժ. կարօտ հիւանդները ընդունվում են լրիւ պանսիօնով։
տռ. (ա. օ.) 378. 100—41

ԲԺԻՇԿ
Յար. Տէր-Մարտիրոսեան
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ.
Ընդունում է առաւ. ժ. 10—12 ը
երեկ. ժ. 5—7-ը.
Կիրակի օրերը միայն առաւ. ժ. 10—12-ը։
Միխայլովսկայա փող. տ. № 76, մուտքը Մենշիկովսկայա փողոցից։
տռ. 524. 50—5

ԲԺԻՇԿ
Կ. Յ. ՂԱԶԱՆՃԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ։
Ընդունելութիւնն ամեն օր առ. 10—12 ժ., երեկ. 5—7 ժամը։
Աբաս-Աբադսկի պերեւլոկ № 7.
տռ. (ա. օ.) 495. 50—12

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Սիֆիլիս (սեռային. «914»), վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւններ. էլեկտրաբուժութիւն. հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից. ժամը 12—2-ը, 5—6-ը։ Կանանց համար ժամը 2—3 ը ցերեկվայ։
Հասցէն՝ Սոլոլակ, Բէբուտովսկայա փող. № 33 (անկիւն Պասկեվիչի փող.)։
Հեռախօս 11—75.
տռ. (հ. կ.) 1395 100—68

ԽԻԶԱԽ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍԸ

1905 թւի ռուսական առաջին յեղափոխութիւնը երբ փլվեց Ստոլիպինի պողպատէ ատրճանից և փակվեցին ձախակողմեան կուսակցական օրգանները, «Մշակն» էր, որ թոյլ տուեց իր էջերում ձախակողմեան բանակի հրապարակախօսներին և նրանց աշխատակիցներին արտայայտվել։ Սակայն ընթերցողները չեն մոռացել այդ ժամանակները, նրանք քաջ պիտի յիշեն այդ։ Ես միայն կը պատմեմ մի դէպքը, որ շատ բնորոշ և ակնբախ կերպով ապացուցում է Համբարձում Առաքելեանի բնական հրապարակախօս լինելը, այն էլ անկաշառ, խիզախ և անկոտրում բարեմասնութիւններով օժտված։

Թէեւ նա ունեցել է մարդկային թուլութիւններ, բայց գրչի մարդկանց մեծութիւնը քննելիս նրանք հաշուի չեն առնվում, որովհետև դա տեղ չունի և չի կարող ունենալ հասարակական և հրապարակախօսական գործունէութեան մէջ. միայն գծուծ և անհասարակ նեղ հաշիւների շուրջ ընկնող մարդիկ են, որ մարդկային թուլութիւնները իրենց միշտ փաստ են ծառայեցնում և այդ միջոցով աշխատում վարկաբեկել հակառակորդին։ Եւ ապագայ քննադատը երբ սկսի Հ. Առաքելեանի մասին գրել, նա հակառակորդների գրչի տակից դուրս եկած յօդուածներում միշտ կը տեսնի միայն անձնական գծուծ հաշիւներ, կամ դարտուղի ստոր միջոցներից ծնված բամբասանքներ, որ երբեք հակառակորդները չը կարողացան ապացուցել։ Եւ այս բանը, իւրաքանչիւր մարդ, եթէ նրա երակների մէջ հոսում է ազնիւ արիւն, պէտք ասէ, թէև նա լինի նրա հակառակորդ բանակի պատկանող։

Այժմ անցնենք փաստերին։

Հրապարակում միայն երկու օրգան գոյութիւն ունէր—«Հորիզոն» և «Մշակ»։ Գրող մարդը չէր կարող չարտայայտվել։ Եւ ես, մտածելով որ Դաշնակցութիւնը, որպէս աւելի ձախակողմ կուսակցութիւն, ինձ թոյլ կը տայ արտայայտվելու գոնէ ոչ կուսակցական հարցերի վերաբերեալ, գրեցի ուտիների ծագման մասին մի քանի յօդուածներ «Գործ» թերթում, ապա «Հորիզոնում» բելլետրիստական պատմուածքներ՝ «Ճիրմակ Շուշանը», իսկ երբ իմացան, որ հեղինակը ես եմ, իմ միւս պատմուածքը՝ «Տէրն ու ծին»՝ վերադարձնելով ասացին.

— Մենք ձեր պատմուածքները չենք կարող տպագրել, որովհետև դուք մեր հակառակորդ բանակի մարդ էք։

Ես նրանց բացատրեցի, որ գեղարուեստը չի կարելի կուսակցական մասշտաբով չափել. ու այդ ուղղութեամբ իմ բացատրութիւնները լսելուց յետոյ պատասխանեցին.

— Գուցէ դուք ճշմարիտ էք, բայց մերժումը խմբագրութեան վճիռն է։

«Մշակի» խմբագրութեանն էլ վճռեցի չը գնալ, որովհետև «Հորիզոնի» դասն ինձ արդէն բաւական էր. և ինչպէս գնայի, երբ ես Հ. Առաքելեանի դէմ «Սուրհանդակում» արտայայտվել էի խիստ լեզւով։

Բայց և այնպէս, վճռեցի գնալ և փորձել. ես չէի հաւատում, որ մեր գրական բարքերը այնքան ընկած պիտի լինեն, [illegible] կանութիւնը զոհեն անձնականին։

Եւ ես մի օր ներկայանալով պ. Առաքելեանին՝ պատմեցի «մեղքս» և խնդրեցի թոյլ տալ «Մշակի» էջերում արտայայտվել։ Նա ինձ լուրջ լսելուց յետոյ՝ ասաց.

— Այո, ես կարդացի «Սուրհանդակի» մէջ ձեր գրածը իմ դէմ։ Ես ոչ թէ ներողամիտ եմ, այլ այդ ընդունում եմ որպէս հրապարակախօսի պարտականութիւն։ Գրչիս հակառակորդին ոչ միայն ես կը հալածեմ, այլ ընդհակառակը, հնարաւորութիւն կը տամ նրան արտայայտվելու հէնց իմ օրգանում։ «Մշակը» համբերատար է դէպի բոլոր կուսակցութիւնները և գրողները. և դա իմ սկզբունքն է։ Կարող էք գրել, և ձեր յօդուածները կամ բելլետրիստական գործուածքները կը տպագրվեն։ Դուք ինձ քննադատել էք «Սուրհանդակում», դա ձեր իրաւունքն է. իսկ ես այդ ձեր իրաւունքը չեմ կարող զոհել իմ նեղ եսասիրութեան և անձնական շահերին. սա իմ սկզբունքն է։

Ահա, ընթերցող, հրապարակախօս Առաքելեանի աշխարհահայեացքը գրական ասպարէզում։ Եւ ես մինչև երկրորդ՝ այս յեղափոխութիւնը, աշխատակցում էի և աշխատակցում եմ նրա օրգանին, հէնց շնորհիւ նրա այդ բնական հրապարակախօս լինելուն։

Դիտմամբ բերի այս փոքրիկ պատմութիւնը, ցոյց տալու ընթերցողներին, որ մենք այսօր կորցրել ենք մեծ հրապարակախօսին և նրա կորուստը շատ ծանր է, մանաւանդ ներկայ մոմենտում։ Նա եղել է մտրակող, խիզախ, խարազանող և նա ընկաւ ոճրագործների ձեռքով, հէնց իր այդ խիզախութեան համար։

Պարզ է, թէ ինչ ազգի ծնունդ են այդ ոճրագործները և ինչ դաւանանքի երկրպագու. Մայիսի վերջերքում ես Արասխանի շինութեան մէջ պանդոկ թէյարանում (Чашка чай) շատ էի լսում պ. Առաքելեանի հասցէին հայհոյանքներ և մինչև անգամ սպառնալիքներ, որի բովանդակութիւնը այս էր.

— Ազգը պէտք փրկել. իրանք ոչինչ չեն անում, իսկ փրկողներին էլ սպանում, խայտառակում են. այդպիսիներին պէտք ոչնչացնել։

Եւ նրան ոչնչացրին։

Եւ նա զոհ գնաց իր ուղիղ և մեծ համոզմունքին. «Քննադատութիւնը հրապարակախօսի իրաւունքն է. ոչ ոք իրաւունք չունի զոհելու այդ իր նեղ կամ շահերին»։ Համոզված դրա մէջ գործեց նա երկար, ծեր տարիներ և զոհ գնաց իր այդ մեծ սկզբունքին, միշտ ինքն էլ լինելով այդ սկզբունքի զինուոր. բայց ընկաւ ոչ թէ գրչի զինուորների ձեռքից, այլ բիրտ և կոպիտ ուժի։ Գրչի մարդուն գրչով պիտի պատասխանել և ոչ թէ գնդակով. վա՜յ նրան, վա՜յ այն կուսակցութեան, վա՜յ այն ազգութեան, որ ազգայնութեան ձայնը քննադատելու խօսքը, հրապարակախօսի լեզուն բռնութեան զէնքով կը կտրէ...

Բայց մի՞թէ Հ. Առաքելեանին սպանեցին։ Ոչ։

Նա նոր կեանք առաւ։ Եւ քանի ապրի ժողովուրդը, հրապարակախօսի այդպիսի տիպարներին միշտ կը յիշէ և օրինակ կը բերի գալոց սերունդներին։

Հանգիստ աճիւնիդ, խիզախ հրապարակախօս։

Աշտար Պայազատ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

Երեքշաբթի, յուլիսի 9-ին, հանգուցեալ Առաքելեանի դագաղի մօտ, բնակարանում, տեղի ունեցաւ առաջին [illegible] հայ հոգեւորականութեան մասնակցութեամբ, գլուխ ունենալով Թիֆլիսի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսին և Քութայիսի յաջորդ Երուանդ վարդապետին։

Անբիծքին ներկայ էին, բացի հանգուցեալի հարազատներից, Թաղման Կարգադրիչ Մասնաժողովը իր ամբողջ կազմով, հայ և օտար մամուլի, ազգային, բարեգործական, կուլտուրական և հասարակական հաստատութիւնների և ընկերութիւնների ներկայացուցիչները և հանգուցեալի յիշատակը յարգողների շատ խուռն բազմութիւն։

Անբիծքից յետոյ կարդացւ Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի և Հայոց Նպաստամատոյց Ընկե[illegible] վարչութեանց միացեալ նիստ[illegible] Հ. Առաքելեանի Թաղ[illegible] Մասնաժողովի տրամադ[illegible] 2000 րուբլի, 1000 ր[illegible]ցի և 1000 րուբլի Վ[illegible]ողից, որոնց հիմնադ[illegible]խա ցուն էր հանգ[illegible]։

Իսկ հանգուց[illegible]ծագնելու մասին [illegible]պաստամատոյցի վ[illegible]ան առանձին խորհրդ[illegible]։

Ամեն օր հանգուցե[illegible]վասներին ներկայանում և խորհ[illegible]այնութիւն են արտայայտում անփոխարինելի գործչի եղերական մահվան առիթով զանազան հայ և օտարազգի ներկայացուցիչներ։

Նոյնպիսի բազմաթիւ ցաւակցական արտայայտութիւններ ուղղվում են և «Մշակի» խմբագրութեանը։

Այսօր երեկոյեան հանգուցեալի բնակարանում հոգեհանգիստ եր. ժամը 6-ին։ Իսկ վաղը նոյն ժամին կը կատարվի հոգեհանգիստ «Մշակի» խմբագրատան մէջ։

Մամուլի բիւրօն որոշեց Հ. Առաքելեանի ընտանիքին ցաւակցութիւն յայտնել նրան հասած դժբաղդութեան համար և ներկայ լինել հանգուցեալի թաղմանը։

ՑԱՒԱԿՑԱ[illegible]ԵՐ

[illegible] յուլիսի

Ցաւում[illegible]ութիւն «Մշակի» խ[illegible]ամբողջ կեանքը ի սպ[illegible]ւիրած՝ անմոռանալի [illegible]կական գործչի սպանու[illegible]

Հայ ժող. [illegible]

[illegible]0 յուլիսի

Չը կայ այլևս ե[illegible]եան պաշտպան մեծ հայ մարդը։ Տասնեակ տարիներ շարունակ հայ իրականութեան մէջ ճշմարտութիւն և արդարութիւն քարոզող մեծ գաղափարական և հայրենասէր մարդը այլևս չը կայ։ Նա ընկաւ իր զօրաւոր գրիչը ձեռքին, նենգաւոր թշնամիների հրացաններից՝ ինչպէս որ ընկնում է պատերազմի դաշտում սուրը ձեռին թշնամու դէմ կռւող հայրենասէր և պարտաճանաչ քաջ զինուորը իր հայրենիքի հողի վրա։

Չարամիտ մարդիկ կտրեցին Համբարձում Առաքելեանի կեանքի թելը, որպէս զի դրանով միանգամից մեռցնեն նրա ազնուօրէն քարոզած գաղափարը. բայց այդպիսի մարդիկ մոռանում են, որ արդարութիւն և ճշմարտութիւն ասած բաները ոչ մի հրացանի ուժով չի կարելի սպանել։ Թէպէտ մարմնապէս մեռաւ Համբարձում Առաքելեանը, բայց հոգով նա միշտ կենդանի է և նրա քարոզած մաքուր մտքերը պիտի ապրեն իր սիրած հայ ժողովրդի սրտերի մէջ դարէ դար։ Յարգանք և պատիւ վաստակաւոր և գաղափարական հրապարակախօսի յիշատակին։

Յովհաննէս սարկ. Համբարեան

ՊԱՏԵՐԱԶՄ

(Անդրկ. Հեռ. Գործ.)

ԱՒՍՏՐՕ-ԹՈՒՐՔ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԵՐԼԻՆ, 9 յուլիսի.— Կրօնպրինց Ռուպրեխտի զօրաբանակ։ Լաբասէ Ջրանցքից հարաւ մենք վանեցինք թշնամու կրկնվող յարձակումները։ Սոմմի աջ ափում հակառակորդի ուժեղ գրոհները վանվեցին։ Երեկոյեան դէմ թնդանօթամարտը կրկին սաստկացաւ Սոմմ գետի երկու կողմում։

Գերմանական կրօնպրինցի զօրաբանակ։ Աւրտուլից արեւմուտք և Նուայոնից հարաւ-արեւմուտք այսօր վաղ առաւօտեան ուժեղ թնդանօթաձգութիւնից յետոյ հակառակորդը ձեռնարկեց տեղական յարձակումներ Վիլլեր-Կոտերէ անտառի մօտ։ Ֆրանսիական մասնակի յարձակումները վանվեցին։

Երէկ մենք իջեցրինք թշնամու 18 աէրօպլան։

Շատօ-Տիէրից արեւմուտք մեզ համար նպաստաւոր կռիւներ են։

Կ. ՊՕԼԻՍ.—Պաղեստինի զօրաճակատ։ Ծովային շրջանում եռանդուն ռազմական գործունէութիւն է։ Ամբողջ օրը տեղի էին ունենում եռանդուն հետախուզական գործողութիւններ։ Մնացած զօրաճակատի վրա թնդանօթամարտ է։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Ազգ. Խորհրդի սոցիալ դեմոկրատական ֆրակցիան քննութեան առնելով Կ. Պոլիս լրացուցիչ պատգամաւոր ուղարկելու խնդիրը, այդ քայլը պատճառաբանում է Կ. Պոլսից տեղեկութիւններ չը լինելով և քաղաքական կեանքի նոր հանգամանքներով։ Թիւրքիան բոլորովին հակամէտ չէ վարվելու «բարեկամական պայմանագրի» համաձայն և շատ ագրեսիվ գործունէութիւն է ցոյց տալիս հայերի վերաբերմամբ, ինչպէս այդ շատ պարզ կերպով երևան եկաւ Ղարաքիլիսայում։ Ռուսի և Թիւրքերի հետ խաղաղ համաձայնութեան յոյսերը պէտք է թողնել և փոխել քաղաքականութիւնը ռուսական օրիէնտացիա ընդունելու մտքով։ Այդ նպատակով ֆրակցիան Կ. Պոլիս ուղարկելու համար առաջ քաշեց Միք. Ղարաբէկեանի թեկնածութիւնը։

Ազգ. Խորհուրդը սոց.-դեմ. ֆրակցիայի պատճառաբանութիւնը գտաւ ուղիղ և համաձայնեց նրա որոշման հետ, բայց հնարաւոր չը գտաւ ուղարկել կուսակցութեան թեկնածու։ Հաւանորէն իբրև պատուիրակ Կ. Պոլիս կուղարկվի Ստ. Մամիկոնեան։

ՆՈՐ ԿՈՏՈՐԱԾ

Ցարսկիէ-կոլոդցից յուլիսի 8-ին հեռագրում են Ազգային Խորհրդին.

«Տեղս հասաւ բատալիոնի հրամանատարը գաղթականների հետ։ Նուխու և Արէշի գաւառի ազգաբնակութիւնը ամբողջովին սրի է քաշված։ Ալազանի ափին բազմաթիւ գաղթականներ են հաւաքված։ Անհրաժեշտ է ձեր անյապաղ օգնութիւնը։

«Բատալիոնի հրամանատար՝ Ստեփանեան, Սղ. ք. Մելիքջանեան, Ահարոնեան, Մակեդոնսկի»։

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՎԻՃԱԿԸ

«Кавк. Слово»-ն զետեղում է շատ ուշագրաւ տեղեկութիւններ, որ ստացել է թերթի աշխատակիցը գերմանական պատուիրակութեան ինֆորմացիայի բաժնի կառավարիչ Ցունկմայերից, որ յայտնել է հետևեալը.

Պոլսի կոնֆերենցիան։ Կոնֆերենցիայի աշխատանքները արդէն սկսվել են։ Կոնֆերենցիայի գլուխ են կանգնած Թիւրքիայի կողմից Էնվէր-փաշա, իսկ Գերմանիայի կողմից կոմս Բերնստորֆ, գերմանական նախկին դեսպանը Վաշինգտոնում։

Կոնֆերենցիայի գլխաւորագոյն նպատակներից մէկն է՝ Անդրկովկասի քաղաքական դրութեան պարզելը և միաժամանակ Թիւրքիայի և Անդրկովկասեան ժողովուրդների փոխ յարաբերութիւնների կանոնաւորումը։ Քանի որ կենտրոնական պետութիւնները—Գերմանիան, Աւստրիան և Բուլղարիան—ճանաչել են Վրաստանի անկախութիւնը, ուստի այդ պետութիւնների ներկայացուցիչները պիտի պնդեն այդ անկախութիւնը Թիւրքիայի կողմից ևս ճանաչելու վրա։

Չը նայած այդ բոլորին, սակայն, գերմանական դիպլոմատիան ամեն ջանք գործ պիտի դնէ ստեղծելու Անդրկովկասեան անբաժան հանրապետութիւն. հնարաւոր է մինչև իսկ, որ Հիւս. Կովկասը միացնեն Անդրկովկասին, որպէսզի քաղաքական կոմբինացիան «հաճելի է» Գերմանիայի աչքում։ Սակայն Գերմանիան խստիւ չի պնդի այդպիսի մի հանրապետութեան ստեղծման վրա։

Պոլսի կոնֆերենցիայի մասնակիցներից շատերը կողմնակից են Կովկասեան հանրապետութեան ստեղծման։

Բագուն։ Ներկայումս Գերմանիայի դիւանագիտական շրջանների ջանքերով Թիւրքական և Ադրբէջանեան զօրքերի շարժումը դէպի Բագու դադարեցված է։ Բագուի բոլշևիկեան զօրքերի և մուսուլմանների միջև ներկայումս զինադադար է։ Բագուի դէմ մղվող կռւի յետագայ ընթացքը կախում ունի Պոլսի կոնֆերենցիայի աշխատանքների հետևանքներից։ Ցոյց կայ, որ արիւնահեղ ընդհարումները այլևս տեղի չը պիտի ունենան Բագուի և Թիւրքական ույժերի միջև։ Գերմանական դիպլոմատիան՝ նկատի առնելով Բագուի ահագին նշանակութիւնը Ռուսաստանի համար՝ ամեն ջանք պիտի գործադրէ՝ յայտարարելու Բագուն ազատ քաղաք։ Բագուն, գտնվելով Անդրկովկասի տերրիտօրիայի վրա, դէպի իրան է ձգում թէ Թիւրքիայի, թէ Անդրկովկասի ժողովուրդների քաղաքագէտներին։ Բայց, միւս կողմից, անհրաժեշտութիւնը Ռուսաստանի համար նաւթահանքեր ունենալ, առանց որի նա չի կարող ապրել, ստիպում է Ռուսաստանի վիճակի մէջ շահագրգռված Գերմանիային՝ յայտարարել Բագուն ազատ քաղաք։

Բաթումը։ Քանի որ գերմանական դիպլոմատիան հիմնվում է Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կէտերի վրա, ըստ որում Բաթումը անցնում է Թիւրքիային, ուստի և Բաթումի վերադարձումը Անդրկովկասին անհնարին է։ Ներկայումս Թիւրքիան արդէն համաձայնել է թոյլատրել առևտրական անարգել օպերացիաները Բաթումի նաւահանգստի միջոցով։

Թիֆլիսը։ Պոլսի կոնֆերենցիան պիտի վերջնականապէս լուծէ հարցը Թիֆլիսի մասին։

Թիֆլիսը կամ Վրաստանի մայրաքաղաքն է կամ Անդրկովկասի մայրաքաղաքը։

ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԱՍԻՆ

Բարօն Կիւլմանը հեռագրում է, որ մենք պէտք է դադարեցնենք ռազմական գործողութիւնները Հիւս. Կովկասի կառավարութեան դէմ։

Այդպիսի կառավարութիւն գոյութիւն չունի։ Դա ֆիկցիա է. նա կար անցեալ տարի։ Ամբողջ Հիւս. Կովկասը պաշտպանում է Խորհուրդների իշխանութիւնը։ Ինչ վերաբերում է Չխենկելի կառավարութեան, բարօն Կիւլմանը մեզ մեղադրում է նրանում, որ մենք այդ կառավարութեանը սպառնում ենք ներս խուժումով։ Նա ոյժով ճնշում է մեզ հաւատարիմ շրջանները, կռւում է տեղական ազգաբնակութեան դէմ և մեր զօրքի դէմ Տաշկենտում (?)։ Բացի այդ, Թիւրքաց զօրքը գնում է դէպի Բագու։ Մենք պնդում ենք, որ պէտք է համաձայնել բոլոր ֆրօնտներում։ Մենք նկատի ունենք Թիւրքական ֆրօնտը։ Պէտք է աշխատել, որ Թիւրքաց առաջխաղացումը կանգ առնի։

Արտաքին գործերի ժող. կոմիսար՝ Չիչերին

ԱԴՐԲԷՋԱՆԸ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԲՈՆԵՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԼՈՒՑ

«Борьба» թերթը հաստատ տեղեկութիւն է ստացել, որ Ադրբէջանի կառավարութիւնը հրաժարվում է անդրկովկասեան կոմիսարիատի բաց թողած բոների երաշխաւորութեանը մասնակցելուց։

Այսպիսով առ ժամանակ վերանում է Ադրբէջանի և Վրաստանի միացումը դրամական սիստեմի շուրջը։ Ուրեմն և անդրկովկասեան բոնները ոչ մի արժէք չը պիտի ունենան Ադրբէջանում։

Վրաց կառավարութիւնը իր վրա է վերցնում բոլոր բոնների լիակատար երաշխաւորութիւնը, որը շրջանառութեան մէջ են Վրաստանի հանրապետութեան սահմաններում. միաժամանակ միջոցներ են ձեռնարկվում, որ Ադրբէջանում եղած բոնները Վրաստան չը լցվեն։

Բոնների հրատարակութեան մէջ ընդհատում չը լինելու պատճառով վրաց կառավարութիւնը նոր դրամանիշներ տպելու համար օգտագործել է հին կլիշէները, փոխելով մի քանի մակագրութիւններ, զարդանկարներ և ներկի գոյնը։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Մօտ օրերս Պոլսից եկած գերմանական մի շոգենաւ բերել է 40 ի չափ վրացի զինուորական գերիներ։ Նրանց պատմելով՝ Թիւրքերի վերաբերմունքը դէպի վրացի զինուորական գերիները մինչև Անդրկովկասի հետ պատերազմ սկսելը բարեացակամ էր, բայց յետոյ վատացաւ։

Վրաստանի անկախութիւնը յայտարարելու նախօրեակներին, գերմանացիները վրացի գերիներին իրանց հովանաւորութեան տակ առան։

Բնորոշ է, որ Թիւրքերը այժմ հաւասարապէս վատ են վերաբերվում ինչպէս քրիստոնեայ վրացիներին, այնպէս և մուսուլման վրացիներին։

Աջարիայի դասաճանութեան լուրը ծանր տպաւորութիւն թողեց Պոլսում ապրող վրացի մուսուլմանների վրա։

Կ. Պոլիսը փաստօրէն գտնվում է գերմանացիների ձեռքում։ Եթէ չը լինէին նրանք, Թիւրքիայի մայրաքաղաքը, շնորհիւ Թիւրքերի անընդունակութեան, վաղուց արդէն կը լինէր սովի ճիրաններում։

Մօտ ժամանակներս Պոլսում այրվեց մօտ 24 հազար տուն։ Կասկածում էին, որ հրդեհ է ձգված և մեղադրում էին հայերին։ Բարեբաղդաբար, քննութիւնը պար-

Հայ Ժողովրդական Կուսակցութիւն

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Հայ ժողովուրդ.

Մի քանի օր, մի սոսկալի ու անարգ ոճրագործութիւն եւս կատարվեց քո մէջ։

«Սրբիչ մաքրելու» քաղաքականութեան յաջորդեց տէրրորի քաղաքականութիւնը. կանանց եւ երեխաների խոշտանգմանը յաջորդեց ծերունիների դարանակալ սպանութիւնը. Թալանի ուղղակի մանրափորձերին հետեւեց քաղաքական մանրափորձը։

Յուլիսի 6-ի երեկոյեան, իր տանը, երեք անյայտ մարդասպանի ձեռքով ատրճանակի երեք հարուածներով սպանվեց Համբարձում Առաքելեանը, «Մշակ» լրագրի խմբագիր-հրատարակիչը։

Սպանվեց մի անձնուէր հասարակական գործիչ, որ իր ամբողջ կեանքը նուիրել էր ծառայելու իր ազգին։

Սպանվեց մի եզակի հրապարակախօս, մի անկաշառ, համարձակ, եռանդուն գրական գործիչ, որ աւելի քան քառասուն տարի «Մշակի» էջերում պաշտպանել էր հայ ժողովրդի ճշմարիտ շահերը, բաց իր խղճի եւ համոզմունքի, արթուն էր պահել հայ հասարակական խիղճը, անողորմաբար հարուածել ու դատապարտել էր հայ կեանքի արատաւոր կողմերը եւ արատաւոր տարրերը։

Ո՞վ սպանեց նրան։

Այդ դու գիտես, հայ ժողովուրդ. փողոցներում, տներում, հրապարակներում—ամեն տեղ միեւնոյն անունն է տրվում։

— Դու գիտես, որ երեք մարդասպանները, որոնք անարգաբար, գողի պէս սպանեցին 63 տարեկան ծերունուն, մինչ նա աթոռում նստած խօսում էր նրանցից մէկի հետ—դրանք, այդ սրիկաները, անարգ գործակատարներ էին իսկական ոճրագործների, վարձկան մարդասպաններ կամ կոյր գործիքներ ուրիշների։

Իսկական ոճրագործները — հասարակութիւնը բացարձակ անուանում է նրանց։ Մենք սակայն ձեռնպահ ենք մնում անուն տալուց, կոնկրէտ ամբաստանութիւն ուղղելուց որեւէ խմբի կամ անհատի։ Սակայն մենք պնդում ենք, որ սպանութիւնը, առանց, ոչ կողոպտելու նպատակով է կատարվել եւ ոչ անձնական [illegible], այլ այս սպանութիւնը քաղաքական—կուսակցական աստառ ունի, մի տէրրօրական գործ է՝ հասարակական գործչի դէմ։

Այս սպանութեան հեղինակները կամեցան լռեցնել այն ձայնը, որ անդադար մերկացնում եւ անխնայ հարուածում էր նրանց չարագործութիւնները մեր ազգային ու հասարակական կեանքի մէջ։ Այս տէրրօրական գործով նրանք կամեցան ահաբեկել բոլոր նրանց, որոնք կը համարձակուին լոյս սփռել այդ խաւարահաչակ հերոսների մութ եւ կործանարար գործողութիւնների վրա։ Նրանք կամեցան սպանել ազատ խօսքը, հասարակական գործերի համարձակ, հրապարակական քննադատութիւնը։ Խօսքի դէմ նրանք գործ դրին գնդակ, գրչի դէմ մաուզէր։

Հայ Ժող. Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէն իր խորին զայրոյթն ու բողոքն է յայտնում այսպիսի զզուելի սպանութեան դէմ, ոչ միայն այն պատճառով, որ նրան զոհ գնաց Կուսակցութեան հիմնադիրներից մէկը եւ իր Կոմիտէի փոխ-նախագահը, այլ եւ այն պատճառով, որ անթոյլատրելի է համարում քաղաքական սպանութիւնը, իբրեւ հասարակական կեանքի նորմալ զարգացման ընթացքը կասեցնող, սանձարձակ չարագործութիւնների ասպարէզ բացող, միջնադարեան ազգակործան եւ ստոր միջոց վրէժխնդրութեան։

Ո՛չ մի արդարացում, ոչ մի մեղմացուցիչ հանգամանք չը կայ այս կանխամտածված քաղաքական սպանութեան համար, որին զոհ դարձաւ անվեհեր, անկեղծ, ճակատաբաց հասարակական գործիչը։ Նրա միակ զէնքը խօսքն էր եւ մամուլը։ Եւ նրա հակառակորդները ամեն հնարաւորութիւն ունէին, նոյն իսկ աւելի, քան հարկաւոր է՝ նրա դէմ կռւելու խօսքի եւ մամուլի միջոցով, հերքելու նրա փաստերը, ուղղելու նրա սխալները՝ եթէ ունէր։ Կային դատարանները, ընկերական եւ պետական, որոնք կարող էին վերականգնել արատաւորված պատիւը, երեւան հանել ճշմարտութիւնը։

Բայց նրանք չը դիմեցին ինքնապաշտպանութեան այս օրինական միջոցներին, որովհետեւ իրանք աւելի լաւ գիտէին իրանց մութ գործերը, որոնց վրա լոյս սփռելը իրանց ձեռնտու չէր։ Նրանք դիմեցին ստոր միջոցի—անարգաբար սպանել տէրին իրանց քննադատողին, լռեցրին իրանց դատապարտող ձայնը։

Եւ մենք կասենք.

Դուք սպանեցիք Համբարձում Առաքելեանին, որովհետեւ դուք յանցաւոր էիք, եւ վախենում էիք նրա մերկացումներից։ Ձեր ոճրագործութեամբ դուք ապացուցեցիք, որ արդար էր Հ. Առաքելեանը՝ ձեզ անուանելով հայկական մաֆիա եւ ձեզ վերագրելով մաֆիական բոլոր ստոր յատկութիւնները։

Հայ ժողովուրդ.

Միացրու քո բողոքի եւ զայրոյթի ձայնը մեր ձայներն. դատապարտի՛ր քաղաքական սպանութիւնը, ազատ խօսքի դէմ ուղղված տէրրօրը, ուր կողմից էլ լինի։ Համբարձում Առաքելեանի սպանութիւնը մի սովորական ոճրագործութիւն չէ, այլ մահափորձ է հայկական ազատ խօսքի, հասարակական քննադատութեան դէմ։ Եթէ թանգ է քեզ խօսքի եւ մամուլի ազատութիւնը՝ պաշտպանի՛ր նրան քո բոլոր բարոյական ուժով, անարգութեան սիւնին բեւեռի՛ր խղճմտանքի եւ ազատ խօսքի անարգ դահիճներին։

Հայ Ժող. Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէ

ցին այդ լուրերի կատարեալ անհեթեթութիւնը։

Պոլսում հայեր շատ կան։ Թիւրքիայի միացեալ մասերում նրանց թիւը շատ քիչ է. նրանց մի մասը թիւրքերը կոտորեցին, միւս մասն էլ կարողացաւ թաքնվել Պոլսում կամ բոլորովին փախչել Թիւրքիայից։

Թիւրքիայի ժողովրդական խաւերի մէջ տիրում է խիստ անբաւականութիւն։ Մօտ կէս միլիոնանոց ազգաբնակութիւն բացառապէս զբաղվում է կողոպուտներով։

Կան գաւառներ, ուր ազգաբնակութիւնը բառի բուն իմաստով սովամահ է լինում։ Յաճախ կարելի է հանդիպել տեսարաններ, երբ քաղցից զազանացած մարդիկ լափում են սատկած ձիերի, շների, մկների եւ այլ անասունների հնացած դիակները։

Պատմողի ասելով, Պոլսում հասունանում է «յեղաշրջում», ուզում են գահընկէց անել Մահմէդ V-ին եւ գահի վրա նստեցնել նրա ազգականներից մէկին։

Էնվէր-փաշայի կուսակցութիւնը շատ ազդեցիկ է, սակայն սպասվող յեղաշրջման պատճառով նա կարող է եւ տապալվել։ Էնվէր-փաշայի քաղաքական հակառակորդն է համարվում ժողովրդի կողմից մեծ համակրութիւն վայելող Թալէաթ փաշան։

Թիւրքիայում տուրքերը սարսափելի բարձր են։

Զինւորական գերիները Պոլսից դուրս են եկել առանց թիւրքերի թոյլտւութեան. նրանք փախչել են գերմանական շոգենաւի վրա թաքնված։

Թիւրքական իշխանութիւնը, իմանալով որ շոգենաւի վրա թաքնված են վրացի զինւորական գերիներ, որոշեցին նրանց կալանաւորել, բայց գերմանացիները թոյլ չը տւին։ («Борьба»)

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Անդր. Հեռ. Գործ.)

ՌՈՒՍԱԿԱՆ ԶՕՐՔԻ ԴՕԿՈՒՄԵՆՏՆԵՐԻ ԱՐԽԻՎԸ ԲԱԹՈՒՄՈՒՄ

ԹԻՖԼԻՍ, 9 յուլիսի.—Թիւրքաց նախկին զօրահրամանատար Վէհիբ փաշայի կարգադրութեամբ Բաթումում կազմակերպվում է նախկին ռուս զօրքի դօկումենտների արխիվ, որոնք ընկել են թիւրք զօրքի ձեռքը իբրեւ պատերազմական աւար։

Այդ դօկումենտները, որոնք պատմական մեծ արժէք ունեն, մի առանձին մասնաժողովի ձեռքով կը դասաւորվեն վրաց հանրապետութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ։

ՌՈՒՍ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԿՈՎԿԱՍԻՑ

ԹԻՖԼԻՍ, 9 յուլիսի.—Հանրապետութեան կառավարութեան եւ գերմանական կովկասեան միսիայի համաձայնութեամբ, կազմակերպված է ծովով Փոթիի վրայով, հանրապետութեան սահմաններից հեռացող քաղաքացիների փոխադրութիւն։

Առաջին հերթին գերմանական շոգենաւի վրա կը նստեն բացառապէս ռուս քաղաքացիք, թւով մօտ 1,300 մարդ։

ՎՐԱՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԹԻՖԼԻՍ, 9 յուլիսի.—Նիստը բացվում է ժ. 12½ ին Չխեիձէի նախագահութեամբ։

Կառավարութեան օթեակում են մինիստրների խորհրդի նախագահը, արդարադատութեան, զինւորական, ֆինանսների, ներքին գործերի եւ ճան. հաղորդակցութեան մինիստրները։

Բիւջետային ֆինանսական յանձնաժողովի անդամ Լօրդկիպանիձէն զեկուցանում է ազգային խորհրդի ծառայողների ռոճիկին վերաբերող օրինագիծը։ Այդ ծառայողների ռոճիկներ մինչեւ այս տարվայ վերջը խնդրվում է 205,300 ռուբլի։

Օրինագիծը ընդունվում է մի քանի ուղղումներով։

Խորհուրդը հաւանութիւն է տալիս Տակայշվիլիի առաջարկութեանը հիմնել ազգային խորհրդին կից գիտական գրադարան անդամների համար, յատկացնելով այդ նպատակին 120,000 ռուբլի։

Լոմտաձէն զեկուցանում է Ռազմավիրական ճանապարհի պաշտպանութեան համար առանձին պահակախումբ կազմակերպելու օրինագիծը, որովհետեւ կանոնաւոր զօրքերը չեն կարող ուղարկվել այդ ճանապարհը պաշտպանելու համար։

Ներքին գործերի մինիստր Ռամիշվիլիի բացատրութիւնից յետոյ օրինագիծն ընդունվում է։

Վեշապելին (ն. դ.) անում է հետեւեալ հարցապնդումը.—Պետական ծառայողների վրա միութիւնը որոշեց խնդրել կառավարութեանը անյապաղ մուծել ազգայնացում պետական հաստատութիւնների մէջ, իսկ եթէ կառավարութիւնը չը գործադրէ այդ միջնորդութիւնը, միութիւնները իսկոյն կը մուծեն ազգայնացումը։ Յայտնի է, արդեօք, այդ կառավարութեանը, եւ, եթէ յայտնի է, ինչպիսի միջոցներ է նա մտադիր ձեռք առնել պետական հաստատութիւններն ազգայնացնելու վերաբերմամբ։

Ներքին գործերի մինիստրը տալիս է երկար բացատրութի[illegible]պնդման առիթով։ Նա ասում է [illegible]ական հաստատութիւնների ծ[illegible] այս բեր է։ Այն ո[illegible]ծառայողներն ինքնակամ ձե[illegible]ն, մինիստրը ձեռք [illegible] (Ձայներ՝ ահիբէ է[illegible]ը թոյլ չի տայ որեւէ [illegible] իրան եւ կառավարութ[illegible] դուրս ոչ մի ձեռնար[illegible]թոյր վոյ կենդանու[illegible]

Ապա մինիստ[illegible]առ մէկի թէ որ հաստատ[illegible]ցնք է մըտցնել ազգայնացու[illegible]մար հարկաւոր են մասնագէտներ, [illegible]թիւը առայժմ մեզ մօտ շատ սակաւ է։ Ազգայնացումը կառավարութիւնը գործադրում է աստիճանաբար։

Արդարադատութեան մինիստր Մեսխիշվիլին յայտնում է, որ արդարադատութեան մինիստրութեան մէջ առիթված է թողնել մի քանի ոչ վրացիների, որոնք համաձայնութիւն են յայտնել սովորել պետական լեզուն։ Սկզբում հարկաւոր է վերակազմել հաստատութիւնները, իսկ յետոյ արդէն մուծել ազգայնացումը, եւ ոչ թէ հակառակը, ինչպէս առաջարկում է Վեշապելին։

Ընդունվում է սօց.-դեմ. հետեւեալ բանաձեւը. «Լսելով Վեշապելիի հարցապնդումը եւ կառավարութեան բացատրութիւնները այդ հարցապնդման առ[illegible]որհուրդը բաւարարվում է կառա[illegible]ն այդ բացատրութիւններ[illegible] հերթական գործերին»։

ՆԵՐՔ[illegible]

Ստացանք [illegible] Սաֆրազեանից՝ հան[illegible]եանի գ-դի վրա պ[illegible]էն 50 ր. յօգուտ հայ որբ[illegible]

ԽՈԼԵՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Յուլիսի 9-ին քաղաքային հիւանդանոցն են տարվել քաղաքի զանազան մասերից խոլերայով հիւանդ 10 եւ կասկածելի նշաններով 16 հոգի։

Բացի դրանից հին սուր վարակիչ բարաքներից փոխադրված են խոլերայով 3 հիւանդ։

— Քաղաքում խոլերա երեւալու պատճառով, քաղաքային վարչութեան անդամ Ա. Օհանջանեանին առաջարկված է շտապ կարգով զեկուցում կազմել քաղաքի մաքրութեան անհրաժեշտ ծախսերի համար։ Ենթադրվում է, որ քաղաքի հրապարակները, եւ ընկած փողոցները, փոս տեղերը մաքրելու համար անհրաժեշտ է 220,000 ռուբլի, իսկ առայժմ այդ նպատակի համար յատկացված է 30000 ռուբլի։ Երէկվանից ձեռնարկված է քաղաքի մաքրութեան գործին։

— 4 րդ թաղամասում կազմակերպվել է յատուկ հոգաբարձութիւն խոլերայի դէմ կռւելու համար։ Հոգաբարձութեան կազմի մէջ մտնում են բժ. Ապրեսեան (նախագահ), բժ. Գինեան, Կ. Սարգսեան, բժ. Շահվերդեան, բժ. Նշխարեան, ատամնաբոյժ Կարապետեան, Ն. Ղորղանեան, աւագ-միլիցիոներ Մելիք-Մուրադեան եւ ուրիշները։

ՎՐԱՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ

Վրաց կառավարութիւնը յուլիսի 9 ի նիստում, ներքին գործերի մինիստրի զեկուցումը լսելով, Քութայիսի գաւ. կոմիտէին յատկացրեց ընթացիկ ծախսերի համար 50,000 ռուբլի այն 2 միլիոնանոց ֆոնդից, որ գտնվում է ներքին գործերի մինիստրութեան տրամադրութեան տակ՝ անիշխանութեան դէմ կռւելու համար։

Քաղ. վարչութեան միջնորդութեան համաձայն՝ 1 միլիոն ռուբլի յատկացնել փախստականների կարիքի համար, որոշեց.—պետական ֆինանսների ծանր դրութեան պատճառով յատկացնել 100 000 ռուբլի։ Դրա հետ միասին յայտնել քաղ. ինքնավարութեան, նաեւ Հայոց Ազգային Խորհրդին, որ կառավարութիւնն այլեւս հնարաւորութիւն չունի ֆինանսական աջակցութիւն ցոյց տալ քաղ. ինքնավարութեանը փախստականական գործի համար, եւ առաջարկել քաղ. ինքնավարութեան, որ փախստականների գործին մասնակից անէ ազգային, հասարակական բարեգործական կազմակերպութիւններին եւ ունեւոր անհատներին։

Պարենաւոր. մինիստրի զեկուցումը լսելով, թէ անհրաժեշտ է կազմակերպել Վրաստան հաց ներմուծելու գործը, կառավարութիւնը յանձնարարեց ֆինանսների, պարենաւորման եւ արդարադատութեան մինիստրներին պայմանագիր կապել օտար երկրների կօնտր-ագէնտների հետ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

❖ Յուլիսի 7-ին Հայոց Ազգային Խորհրդի կողմից Բաքու մեկնեցին Մ. Յարութիւնեան եւ Մ. Արզումանեան՝ հայ թիւրքական դաշնագրի Բաքւի հայկական գործերին վերաբերեալ կէտը իրականացնելու համար։

◆ Երէկ քաղաքագլուխ Ելիաւան մի ամսվայ արձակուրդով մեկնեց քաղաքից։ Նրա բացակայութեամբ քաղաքագլխի պաշտօնը կատարելու է քաղաքագլխի օգնական Ա. Ա. Կալիւժնին։

❖ Հ. Ժ. Կուսակցութեան կենտրոնական կոմիտէն երէկ քաղաքում տարածեց մի կոչ՝ ուղղված հայ հասարակութեանը, որ տպում ենք «Մշակի» այսօրվայ համարում Հ. Ժ. Կուս. բաժնում։

◆ Երկու օր առաջ Աւճալայում գործողութեան մէջ դրվեց երկրորդ Ջրաշարժ մեքենան, քաղաքի Ջրի կարիքը գոհացնելու համար։

❖ Վրաց կառավարութիւնը այս օրերս վերացնում է Կովկասի ուսումնական շրջանային վարչութիւնը, արձակելով նրա բոլոր ծառայողներին, տալով դրամական գոհացում ընդունված հիմունքներով։

◆ Այսօր երեկոյեան ժամը 6 ին (Նոր ժամանակով) Կ. Հ. Բարեգործ. Ընկեր. տան մէջ կը կայանայ հայրենակցական միութիւնների վարչութիւնների ընդհանուր ժողովը, որ քննելու է մի շարք կարեւոր խնդիրներ եւ լսելու է Յովհաննէս Թումանեանցի զեկուցումը։

◆ Այս օրերս Թիֆլիսում անյայտ չարագործների ձեռքով գերվել էր եղբ. Բոզարջեանների ծխախոտի գործարանի ներկայացուցիչ Համբարձում Եսայեան, որին ազատելու համար չարագործները պահանջում են եղել խոշոր փրկանք։ Լուրերի համաձայն, չարագործները, չը ստանալով փրկանքը, սպանել են Հ. Եսայեանին։

❖ Թիֆլիսում վերջին օրերս շատացել է գողութիւնների, աւազակութիւնների եւ սպանութիւնների թիւը։

◆ Հայազգի Գալուստ Տէր-Մկրտչեանի մահվան առիթով երէկ մի շարք հայկական հիմնարկութիւնների ներկայացուցիչներ այցելեցին Թիֆլիսի թեմի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսին, յայտնելով իրանց ցաւակցութիւնը նրան, իր մտերմաւոր եղբօր կորստի համար։

❖ «Боже царя храни» երգելու համար պահպանութեան շտաբը ձերբակալեց զինւորներ Բ. Բրեժնովին եւ Իվ. Պավլովին։ Վրաց հանրապետութեանը վիրաւորանք հասցնելու համար ձերբակալվեցին շտաբս-կապիտան Իվ. Բեսարաբով եւ զինւոր Բաշյան.

◆ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ առաջնորդողի մէջ ասված է. «... թէ քաղաքական գործունէութիւնը պիտի հիմնված լինի բարոյական գաղափարի վրա եւ նրա (գաղափարականութեան) միջոցները յամենայն դէպս պիտի խախտեն բարոյական գաղափարը»։ Պէտք է լինի. «չը պիտի խախտեն»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

«Մշակի» խմբագիր Հ. Առաքելեանի եղեռնական մահվան առիթով Թիֆլիսի հասարակութեան մէջ շշուկներ են պտտվում եւ նոյն իսկ որոշ սեւ-հոգի եւ վատասիրտ հոսանքների մէջ յամառօրէն պնդում են, որ Հ. Առաքելեանի սպանողներն եղել են «Մշակ» լրագրի գրաշարները։

Սրանով մենք, «Մշակ» լրագրի գրաշարներս, մամուլի միջոցով հանդէս ենք գալիս՝ մեր խիստ եւ արդար բողոքը արտայայտելու այն դիւրահաւատ մարդկանց, որոնք միամտաբար խաբվում են ու հաւատում այդ քսու եւ պնակալէզ մարդ-հրէշների գործակալների խօսքերին։

Միամիտ պէտք է լինել հաւատալու այն պրովոկացիօն սուտերին, որոնց աշխատում են դաժան մարդասպանները փաթթել անմեղ գրաշարների վրա իրանց չարագործութիւնը եւ նրանց քրտինքոտ շորերով սրբել խեղճ եւ բազմաչարչար ծերունի բերնը, որ յաւիտենական դրոշմ է դնելու նրանց սեւ ճակատներին եւ ուրուականի նման հետեւելու է նրանց, մինչեւ մի օր կը պարզվի այդ չարագործների հետքը...

Իսկ մենք, «Մշակ» լրագրի գրաշարներս, որ մեզանից շատերը նոյն լրագրի վրա համարեա աշխատել ենք 20—25 տարի, բացի լաւութիւնից ուրիշ ոչ մի վատ բան չենք տեսել մեր սիրելի խմբագրից, եւ միշտ շնորհակալ ենք եղել նրա բարեհարութիւնից. շնորհակալ ենք եղել ոչ թէ միայն մենք, ներսի գրաշարներս, այլ եւ դրսի գրաշար-ընկերները բարի նախանձով են խօսել մեզ հետ, որ մենք, յանձին Հ. Առաքելեանի պէս խմբագրի, ունենք մի գորովագութ մարդ, որ միշտ հօր նման է նայում մեզ։

Յիշենք մի քանի օրինակ անցեալից.

Ասացէք, պարոններ, Թիֆլիսի ո՞ր թերթի խմբագիրը եւ խմբագրութիւնն է նայել իր գրաշարներին այնպէս եւ օգնել ու մխիթարել այնպէս, ինչպէս նայել եւ մխիթարել է մեզ հանգուցեալ Հ. Առաքելեանը։

Դրսի ընկեր-գրաշարներից շատերը կը յիշեն, որ սրանից մի տասը տարի առաջ, երբ հիւանդացաւ «Մշակի» գրաշարապետ Սանդրո Հայրապետեանը, Առաքելեանն էր, որ պահում էր նրան նրա ամբողջ հիւանդութեան ընթացքում՝ նպաստ վճարելով, եւ երբ վախճանվեց, դարձեալ Առաքելեանն էր, որ մի կլորիկ գումար վճարեց նրա ընտանիքին։

Առաքելեանն էր, որ նոյնպէս հիւանդութեան ընթացքում եւ թաղման դէպքում ապահովեց նախկին ընկերներ Լեւոն Յակոբեանին, Գէորգ Պապուլեանին եւ, նամանաւանդ, Գրիգոր Տէր-Առաքելեանին ու մինչեւ անգամ «Մշակից» ոչ մի կախում չունեցող դրսի ընկեր գրաշար Խաչեակին, որի համար նոյն իսկ հոգում էր ամսանոցային ծախքերը եւ այլն եւ այլն. այդպիսի շատ եւ շատ բարեգործութիւններ, որ մինչեւ անգամ նրա գաղափարական հակառակորդներին եւս յայտնի էր։

Այս բոլորից յետոյ գալ եւ ասել, որ Հ. Առաքելեանի սպանութիւնը կատարվել է գրաշարների ձեռքով, եւ դիտաւորեալ լուրեր տարածել այդ մասին, մենք կարծում ենք, որ դա չարագործութեանց չարագործութիւն է, դա սրբապղծութիւն է, որի համար նոյն իսկ քարերը կը բողոքեն, եթէ միամիտ եւ դիւրահաւատ հասարակութիւնը շուտով գլխի չընկնի եւ չը նշաւակի այդ անամօթ լուրերը տարածողներին, որոնց նպատակը յայտնի է...

Մենք առաջին անգամ չէ, որ պահանջ ենք ներկայացրել խմբագրութեանը, եւ առաջին անգամը չէ որ պ. Առաքելեանը մէկ թէ մերժել է, բայց իսկոյն խոստացել է միւս խմբագրութիւնների նման աւելացնել մեզ հաւասարապէս, եւ կատարել է բարեխղճօրէն՝ անշուշտ մարդու նման՝ իր խոստումը։ Բայց այս վերջին պահանջը, որ մենք ներկայացրինք կեանքի դժան հանգամանքներից դրդված, հանգուցեալը թէեւ մերժեց, եւ իր օրգան՝ «Մշակի» մէջ յայտարարեց, որ թերթը գուցէ առժամանակ դադարեցվի, բայց մենք գրաշարներս յոյս ունէինք, որ մեր եզակի հայր խմբագիրը կը կատարի եւ այդ աննշան պահանջը, եւ ահա դաւաճան չարագործների գնդակները եկան վերջ դնելու մեր սիրելի հովանաւորի եւ բարերարի վերջին խօսքերն իմանալու։

Օգտվելով այս դէպքից՝ չարագործների խմբակը՝ որ միշտ միջոցների մէջ խտրութիւն դնել չը գիտէ—անհիմն եւ չինծու լուրերով ուզում է թունաւորել միամիտ հասարակութեան միտքը։

Ո՛չ, պարոններ, չենք եղել եւ չենք էլ ուզում լինել մաուզէրների եւ պլէտների քաղաքականութեան համակիրներ, եւ միշտ, ինչպէս ինտերնացիօնալի սուրբ դրօշի հաւատարիմ երկրպագուներ, միշտ զզւանք ենք արտայայտել եւ արտայայտում ենք միջնադարեան այդօրինակ վրէժխնդրութեան ձեւերի դէմ։

Մեր խորին յարգանքը Հ. Առաքելեանի անշնչացած աճիւնին եւ մեր զզւանքը չարագործներին։

Յ. Գ.—Խնդրում ենք տեղական բոլոր թերթերին արտատպել սոյն նամակը։

«Մշակի» գրաշարներ

ՄԱՄՈՒԼ

ՎՐԱՑ ՄԱՄՈՒԼ

«Էրթոբա», վրաց մենշեվիկների օրգանը, Վրաստանի այլ եւ այլ մասերում սկսված գիւղացիական շարժման եւ անիշխանութեան գլխաւոր շարժառիթը համարում է հողային հարցը, օրվայ առաջնակարգ հարցը, որը ներկայումս լուրջ մտահոգութիւն է պատճառում հանրապետական կառավարութեանը։

Անիշխանութեան նշանները,—ասում է թերթը,—սկսած են երեւալ մեր երկրի աւելի կուլտուրական մասերում։ Ցաւալի տեղեկութիւններ են ստացվում Քարթալինիայի գիւղերից. այնտեղ չեն խնայում ոչ մանկահասակներին եւ ոչ էլ ծերերին, նոյն իսկ կանանց։

Սարսափահար եղած կալուածատէրերը թողնում են բոլորը կալուածքը իրանց ամբողջ ստացուածքը եւ փախչում գիւղից դէպի քաղաքները։

Նրանցից շատերը կորցնում են իրանց բոլոր բերքը, դաշտերը մնում են առանց հնձվելու։

Գիւղացիների վարմունքը հարկադրում է խորապէս մտածել։ Եթէ այս դրութիւնը երկար շարունակվելու լինի, մեր երկրին էլ կը վիճակվի նոյն ճակատագիրը, ինչ որ վիճակվել է Ռուսաստանին, որը բոլորովին տապալվեց անարխիայից։

Կասկած չը կայ, որ կառավարութիւնը իր վրա կառնի՝ անիշխանութեան դէմ կռւելու մղելը, նա կը կռւէ նրանց դէմ նաեւ մահվան պատժի նոր օրէնքով։ Յանցաւորները պէտք է զգան, որ Վրաստանի հանրապետութիւնը հաւասարապէս պաշտպանում է իր բոլոր քաղաքացիների անձեռնմխելիութիւնը, ուստի անխնայ կերպով կը պատժի բոլոր կողոպտիչներին եւ մարդասպաններին։ Բայց, ինչպէս փորձերից մենք գիտենք, անիշխանութիւնը ճնշելու համար բաւական չեն միայն բացբասխաները։ Անհրաժեշտ է ոչնչացնել այդ անիշխանութեան դրդապատճառները։

Պէտք է արձանագրել, որ անդրկովկասեան կառավարութեան դեկրետը և սէյմի օրէնքը հողերը բռնագրաւելու մասին շատ լաւ ներգործութիւն ունեցաւ ժողովուրդը խաղաղեցնելու գործում. ժողովուրդը սկսեց հաւատ ընծայել դէպի նոր կառավարութիւնը և գրկեց խաղաղ կեանքը։ Բայց հէնց որ մի քանի ազնուական անտակտօրէն և անհեռատեսութեամբ դիմեց օտարերկրացիներին՝ խնդրելով վերադարձնել իրանց հողերը, գիւղացիների խաղաղութիւնը խախտուեց և էքսցեսները սկսեցին նորից երևալ։

Մենք հաւատում ենք մեր ժողովրդի մեծամասնութեան խոհեմութեանը սակայն այս անցողական ժամանակ, երբ հին իշխանական հայեացքները և կառավարական ապարատը տապալված են արդէն, իսկ նորերը գտնվում են շինարարութեան և բնական տատանման պրոցեսում, հասարակութեան կործանարար և անհնազանդ տարրերը մեծ ազդեցութիւն են ձեռք բերում։ Ուստի մենք դուրս եկանք ազնուականութեան այն տարրերի դէմ, որոնք իրանց անխոհեմ գործողութիւններով նպաստում են յուզմունքներին և դնում իրանց դասը վտանգաւոր կացութեան մէջ։ Դժբաղդաբար մեզնում գործող աջակողմեան կուսակցութիւններն էլ բաւականաչափ տակտ չունեցան և մեր գործողութիւնները նրանք բացատրեցին վրէժառութեան ցանկութեամբ և ատելութեամբ դէպի արտօնեալ դասը։ Նորից ենք կրկնում, որ ոչ ոք այժմ չունի պատմութեան անիւը ետ շրջելու և նախկին ազնուականութիւնը նոյնպէս պիտի հրաժարվի հին ազատութեան տիրապետութիւնը վերադարձնելու մտքից. նա պէտք է հասկանայ, որ վերանորոգված կեանքին համապատասխան չէ ճորտատիրութեան մնացորդների գոյութիւնը, և անկեղծօրէն վստահանայ դեմօկրատիային, որը շահագրգռված չէ ազնուականութեան ներկայացուցիչների կամ քաղաքացիների ոչնչացումով։

Ասածից հետևում է հետևեալ պարտականութիւնը ազգային խորհրդի համար, որը պէտք է պաշտպանութիւն գտնի ամենքի կողմից. գիւղացիութիւնը պէտք ապահովվի հողով։

Թէև այժմ փաստօրէն հողը արդէն գիւղացիութեան ձեռքումն է, սակայն նա հաւատացած չէ, թէ ոչ ոք ետ չի խլի նրան իր ձեռքից։ Ուստի հողի տիրապետութեան ձևի հարցը պէտք է լուծումն ստանայ կարելույն չափ շուտով։ Միևնոյն ժամանակ և անհրաժեշտ է, որ Վրաստանի ամէն մի քաղաքացի մի ցանկութիւն ունենայ — վերջ տալ արհեստական կերպով ստեղծված ապստամբութիւններին մեր երկրի այս և այն մասերում։ Այժմ ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ միայն այն տականքների հետ, որոնք բոլշևիկներ անունն են կրում, ձեռք-ձեռքի տուած աշխատում են պայծառափայլ դասի մի քանի ներկայացուցիչները և ստեղծում մեր երկրի զանազան մասերում անկարգութիւններ։ Այդ սանձարձակ մարդիկ պէտք է իմանան, որ, ամբողջ Վրաստանի հետ միասին, նրանք վտանգաւոր դրութեան մէջ են դնում և այն դասը, որին իրանք պատկանում են և որին այժմ աւելի ծառայութիւն են մատուցանում։

*

«Սաքարթվելօս» շարունակում է ազնուականների դեր խաղալ իր ազգի և նրա նոր բարեկամների մէջ, պահանջելով աւելի իրական, աւելի շօշափելի երաշխաւորութիւններ վերջիններիս համար, քանի որ նրանք իրականացրին վրաց ազգի վաղեմի իղձը։

Գերմանիան, Աւստրո-Ունգարիան և Բուլգարիան,—ասում է թերթը,—հովանաւորում են վրացական նոր պետութիւնը։ Նրանք արդէն շատ էական օգնութիւն ցոյց տուին թոյլ Վրաստանին։ Կարելի է նոյն իսկ ասել, որ նրանք փրկեցին նրան ազգային ահեղ վտանգից։ Բոլչալուն, Ացխուրը, Նատանեբին, Սուխումի դեսանտը և այժմ էլ Կ. Պոլսի կոնֆերենցիան լաւագոյն ապացոյցներն են Գերմանիայի վերաբերմունքի դէպի մեզ։

Վրաստանի տարեգրութիւնը գուցէ չը յիշի նման վերաբերմունք մի ուրիշ օտար պետութեան կողմից։ Բայց դա սկիզբն է միայն, առաջին քայլը՝ Վրաստանի մերձեցման Եւրոպայի հետ։ Առաջին խօսքը ասել է Գերմանիան, այժմ Վրաստանի հերթն է։ Շատերը վախենում են, որ Վրաստանը չի կարող արդարացնել իր դաշնակիցների յոյսերը։ Մենք պէտք է յիշենք, որ գերմանացիները րէալ գործի երկրպագուներ են և չեն սիրում չափազանցրած կարծիքներ ոչ միայն ուրիշների մասին, այլ և իրանց մասին... Ժամանակակից պետութիւնների ներքին և արտաքին քաղաքականութիւնը, պատերազմի կամ խաղաղութեան ղեկավարողը հաշիւն է ու շահը։ Եթէ այժմ էլ մի որևէ ազգ ոգևորվի ռոմանտիքական ցնորքներով և կամենայ վերակազմել ամբողջ աշխարհը, նա իր արտացոլումը կը տեսնի բոլշևիկական Ռուսաստանում։ Մեր նոր դաշնակիցները չեն պահանջի Վրաստանից աւելին, քան այն՝ ինչ որ նա կարող է տալ։ Բայց մենք էլ պէտք է յիշենք, որ Վրաստանում Գերմանիան և իր դաշնակիցները իրանց շահերն ունեն...

Ոչ ոք չի կասկածի մեզ նրանում, թէ մենք ոչ բաւարար կերպով ենք գնահատում մեր նոր դաշնակիցների ցոյց տուած աջակցութիւնը։ Բայց որպէս զի մեր յարաբերութիւնները դաշնակիցների հետ աւելի րէալ կերպարանք ընդունեն, այլ ոչ թէ միայն հաճելի զգացմունքների շրջանակում, անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք Վրաստանի կապակցութիւնը դաշնակիցների հետ հիմնաւորեն ամուր քաղաքատնտեսական հողի վրա։ Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Գերմանիան Արևելքում ընդարձակ խնդիրներ ունի...

Բայց դրանք հեռաւոր նպատակներ են... Իսկ այժմ, ով նկատի է առնում սարսափելի համաշխարհային պատերազմի պայմանները, չէ կարող չը համաձայնվել մեզ հետ, որ ներկայ մոմենտում Գերմանիային աւելի հարկաւոր են՝ բուրդ, կաշի և մարգանէց, քան համակրութիւնն ու սէրը այն երկրների, որ գտնվում են Գերմանիայի համար անհրաժեշտ այդ ապրանքները։ Մենք ունենք այդ մթերքները և մենք պէտք է աշխատենք, որպէս զի մեր դաշնակիցները օգտվեն այդ բոլորից։

Այդ են պահանջում նաև մեր տնտեսական շահերը։ Գերմանիան իր կողմից էլ մատակարարի մեզ այն ինչ որ մենք չունենք։ Մենք պէտք է այդ ուղին բռնենք և արդէն բռնել ենք, սակայն դեռ ևս հանդիպում են շատ խոչընդոտներ։

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼ

«Возрожденіе» թերթը շարունակում է իր թունաւոր սլաքները Ռուսաստանի դէմ։ Օպոչինինի բերանով նա մխտում է այսօր նրա բոլոր ոյժերը, մինչև իսկ գիւղն ու ինտելիգենցիան.

Բազմամիլիոն ժողովրդի տխրահռչակ յեղափոխութիւնը՝ գլխաւորապէս մի կռիւ էր տաք տեղերի համար. երէկ նստել ու տաքացնում էին իրանց ձեռքերը ուրիշները, այսօր էլ նստել ու տաքանում են ուրիշները։ Ընկնելով Ձմեռային պալատ, Կերէնսկին սկսեց գրել Ալէքսանդր Բ-ի գրչով, շրջել կայսերական գնացքով և կայսերական աւտոմօբիլով, ու խմել շամպանսկի արքայական մառաններից։ Յեղափոխութիւնները սովորաբար տալիս են այնպիսի օրինակներ հերոսութեան և անձնազոհութեան, որոնք յետոյ մտցվում են պատմութեան մէջ. իսկ ինչ տուեց այդ կողմից Ռուսաստանը։ Աւելի լաւ է չը խօսել ռուսական յեղափոխութեան հերոսութեան մասին։ Ամէն մէկը հրաժարվում էր ինչից կուզէք՝ մտածելով միայն իր սեփական անձի փրկութեան մասին, և վերջ ի վերջոյ, ամէն ինչ յանգաւ մի կանոնի՝ «Այսօր իմ հերթն է ապա լինել, իսկ յետոյ ինչ կուզէ թող լինի»։

Ով չէ իրացնում և չէ տեսնում ռուսական հասարակական և ժողովրդական կեանքի այդ բոլոր խորը պատճառները, նա, ի հարկէ, զարմանքով կանգ է առնում. «Այս ինչ է պատահել Ռուսաստանին»։ Բայց ով տեսնելու ընդունակ է, նրա համար հարցը պարզ է։

Մեզանում շատ էր ընդունված բոլոր դժբաղդութիւնների համար կշտամբել հին իշխանութիւնը և հին բիւրօկրատիային, բայց այժմ մի ամբողջ շարք կառավարութիւնների փոփոխութիւնից և փորձերից յետոյ, գալիս ենք այն եզրակացութեան, որ Ռուսաստանը կառավարելը այնքան էլ դիւրին բան չէր։

Ես ամենևին չեմ պաշտպանում Պետրօգրադի նախկին բիւրօկրատիան. դրանք ի հարկէ մեծ ցինիզմի վերաբերմամբ մեծ անտարբերութիւն ունեցող մարդիկ էին. այլ ուզում եմ ասել, որ Ռուսաստանը մինչև այժմ նրանց փոխարինողները չը տուեց։

Բայց աշխարհի բաղդը վաղուց արդէն դասաւորվում է այնպէս, որ ոչ մի ժողովուրդ այժմ չէ առանձնացված միւսներից չինական պարսպով, և որ չէ կարելի անպատիժ կերպով յիմարութիւններ անել, երբ կողքիդ հարևանը պահում է իրան խելացիօրէն։

ԿԵԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

ԲԱԿՈՒՐԻԱՆԻ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄՕՏ

Բակուրիանիում, ինչպէս յայտնի է, հաւաքված է վաթսուն-հազարանոց հայ գաղթականութիւն Ախալքալաքի և Ախալցխայի գաւառներից։ «Соціалъ Демократъ» թերթը հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում նրանց կրիտիքական դրութեան և կարիքների մասին։ (Մենք այդ բերում ենք որոշ կրճատումներով)։

«Նրանց միայն մի մասն է տեղաւորվել դատարկ ամառանոցային շէնքերում. մեծամասնութիւնը ծառերի ճիւղերից պատրաստված վրանների տակ է մնում և գետնախուղերում։

«Շտապով իրանց տեղերից պոկվելով, գաղթականները զրկվել են հացից։ Բայց այդ պիտիների թիւը քիչ է. մեծամասնութիւնը 2—6 ամսվայ հաց ունի։ Բոլորն էլ ունեն եղջերաւոր անասուններ ու մաքիներ։ Եւ սովից, այդ բառի բուն իմաստով, վախենալու հիմք չը կայ։ Անասունների քանակը ոմանք հասցնում են 50 հազար գլուխ, ուրիշները 800 հազար։ Ճշմարտութեան աւելի մօտ է միջին թիւը՝ մօտաւորապէս կէս միլլիոն գլուխ, որովհետև հազուագիւտ չեն ընտանիքներ, որոնց վրանների մօտ կարելի է համարել մի քանի տասնեակ կովեր, եզներ ու գոմէշներ։ Այդպիսի մի քանակութեան համար Բակուրիանի արօտները անշուշտ շատ փոքր են։ Ուստի պետական իշխանութեան առաջ կանգնած է արագ միջոցների հարցը՝ փրկելու այդ ահագին ազգային հարստութիւնը, որը կարող է ուտեստի պաշարից ոչնչանալ։

«. . . Յանկարծական դժբաղդութեան մօմէնտին, ներկայ փախստականական շարժումը իր հանդէպ չունեցաւ իրանց տեղերում ոչ կազմակերպութիւններ, ոչ կերակրելու, ոչ բուժելու և ոչ էլ բազմահազար ազգաբնակութեան գոյքի պահպանութեան դժուարին գործը վարելու ընդունակ մարդիկ։

«Պարէնաւորման մինիստրութեան կողմից Բակուրիանի ուղարկված իր [illegible] երիտասարդ մարդուն պարզապէս ույժից վեր բան էր վիճակված։ Ույժից վեր էր նա և մի այլ անձի համար, որը միաժամանակ ներկայացուցիչն էր թէ նոյն մինիստրութեան և թէ Հայոց Ազգային Խորհրդի, որովհետև նա չէր կարող անել ամէն բան այնտեղ, ուր հարկաւոր է աշխատաւորների մի ահագին խմբակ, կոլլէկտիվ, փորձված մասսայական խնամատարութեան և մարդկանց տեղաւորման գործում։

«Անզօր է նաև նահանգական կոմիսարի կազմած մասնաժողովը։

«Կազմակերպվեց վերջապէս փախստականներից ու տեղական բնակիչներից մի կոմիտէ։ Սակայն դրանք բոլորն էլ զուրկ են հասարակական գործունէութեան նախապատրաստական շկօլայից, ուստի և առանց որևէ պլանից և հեռանկարներից։ Կոմիտէի ֆունկցիաները կայանում են օրվայ մանր խնդիրների մէջ։

«Ի վերջոյ տեղում չը կայ բժշկիտ թէ համար ոչ փախստականների, ոչ անասունների, ոչ սննդառութեան և ոչ էլ բուժարանական կէտերի։ Մարդիկ հիւանդանում են և մեռնում բնակ[illegible] դուրս, կազմակերպված հսկողութ[illegible] անապահով՝ թէ ներքին [illegible]ն պաշտպանութեան մ[illegible]

«Եւ միայն [illegible]ւնն է, որ փրկում [illegible] աւելի մեծ դժբաղդ[illegible]

«Սահմանվ[illegible] պէտք է լինի մի կօմ[illegible]։ Կոմիսարն ար[illegible] բանկմաց և աշխա[illegible] մօտ կայ երկու տա[illegible]ն միլլիոններ։

«Միլլիոններ[illegible] փախստականներից էժանագին ան[illegible] դէմ ու դէմ ցրվեցին իրանց գործե[illegible]

«Տեղում պէտք է լինի կարմիր գվարդիայի շտաբի պետը, կամ կարմիր գվարդիականներով։

«Շտաբի պետը թէև իր տեղումն է, սակայն նրա շուրջը չը կայ, ոչ էլ կարմիր գվարդիականներ։ Բոլորն էլ ցրվել են իրանց սպեկուլյացիական գործերով։

«Տեղում պահանջվում է ունենալ որոշ թւով վրացական հուսարներ կարգը պահպանելու և աւազակային հարձակումներին դէմ կռիւ մղելու համար։ Որոշ քանակութեամբ հուսարներ կան։ Երևում են ազնուականական գիմնազիայի կամաւոր զինուորների կանտերը։ Երիտասարդ զինուորները սրարշաւում են փախստականների գլխի ձերի վրա...

«Եւ երբ մի կէս [illegible] նրանց աչքերի առաջ յայ[illegible]ն խումբը, տեղից շարժ[illegible]ը 12-ին ցերեկով քշ[illegible]ս անասուն։

«Անհատա[illegible]այդ քաշ հուսարները [illegible]ւմբի նըկատմամբ։

«Էժանագին [illegible]իւղ գնելու ծարաւ [illegible] գնացքներով [illegible] ու նրանց առաջ [illegible] բերում այնտեղ, որոնք [illegible]ծում են իրանց ձրի երկաթուղ[illegible]ը։ Նրանք գալիս են Բակուրիանի էժան գնումներ անելու համար, բեռնաւորելով մարդատար վագոնները ոչխարներով ու գառներով։ Նրանց դէմ մաքառելու համար հուսարները յաղթել չը գիտեն, նրանք ոչ միայն որսում են սպեկուլեանտների նպատակով առնվող ոչխարները, այլ և, ընդհակառակը, նայում են փախստականների կարիքները։ Սկզբում զարմանում էին՝ ինչու համար։ Բայց մի կարգի դիտողութիւն գնի վերցնելուց յետոյ հարցը պարզվեց. հուսարների ազնուականական անդրավարտիքները կարօտ էին վերանորոգութեան...

«Փախստականների անկարողութիւնը, անփորձութիւնը, պաշտօնական կարգադրիչների սակաւաթիւ և անկազմակերպ լինելը, պահապանների անխիղճ շահամոլութիւնը— ահա այս է Բակուրիանի կեանքի ընդհանուր պատկերը։

«Փախստականների մէջ կան 5 հազարաչափ զինուորներ։ Նրանք շատ լաւ զինված են *)։ Ունեն իրանց մէջ օֆիցերներ։ Եւ այնուամենայնիւ մի երկու տասնեակ աւազակներ բոլորի աչքի առաջ անպատիժ կերպով քշում տանում են նախիրը։ Այդպէս է սարսափի բնոյթը։ Երբ մարդիկ գտնվում են սարսափի տակ, նրանք նման են հօտի, զուրկ դիմադրելու կամքից, թէկուզ թւական գերակշռութիւնն էլ, սպառազինութիւնն էլ նրանց կողմն է...

«Կապիտան Ուստինովը ուղարկված էր Բակուրիանի, որպէս զի զինված ույժի օգնութեամբ ապահովէ մթերքների առատահոսութիւնը փախստականների թողած բնակավայրերից։ Այնտեղ շատ հաց կայ։ Ոմանք թողել են մինչև հազար պուդ, ուրիշները հազար հինգ հարիւր։ Ընդհանուր առմամբ՝ մի քանի տասնեակ հազար ամենահամեստ հաշւով. աւելի հաւանական կը լինէր ասել երկու-երեք, գուցէ և աւելի, հարիւր հազար պուդ հացահատիկներ և ալիւր։

«Ենթադրութիւն կար, որ սայլերի կարաւանը ուղեկցելու համար կապիտան Ուստինովը կօգտվի տեղական զինված ույժերով։ Բայց որովհետև այդ տեղական ույժերը զբաղված էին ոչխարային, այծային և բրիւկային գործերով, ուստի կոչ արվեց կամաւորներին, առաջարկելով գնալ միասին մաքրելու նրանց ծննդավայրերը։

«Եւ ինչ։ Այդ 60 հազարանոց ամբոխից, որի մէջ կային ոչ պակաս քան 5 հազար զինուորականներ, այդ կոչին արձագանք տուեցին միայն 11 հոգի։ Նրանցից մէկը՝ սխալմամբ։

«Կամաւորական զօրամասի մէջ մտնել չեն ուզում։

«Ուստինովի կամաւորական զօրամասը հետախուզութիւն կատարելով պարզեց, որ Բակուրիանից 15—17 վերստ հեռաւորութեան վրա, խճուղու երկու կողմերում, կանոնաւոր շինված խրամատների մէջ նստած են զինված բանդաները թիւրքական օֆիցերների հրամանատարութեամբ։ Փախստականների վերցրած ու ապա ճանապարհին վայր ձգած ամբողջ հացի պաշարը արդէն ժողովել է թշնամին։ Թիւրքերը մեծ ույժեր չունեն։ Եւ եթէ լինէր լաւ դիսցիպլինայով մարզված մի թէկուզ փոքր զօրամաս, կարելի էր նրանով մաքրել Վրաստանի տերրիտօրիան և՛ թիւրքական և թէ հայրենական բանդաներից, որոնք, ինչպէս անգղները գէշերի վրա, ամէն կողմերից եկել վրա են տուել թշուառացած փախստականների վրա։

«Այդ պայմաններում խնդիրը աւելի կը հեշտանար, քանի որ ուժեղ զօրամասի ներկայութիւնը ուշքի կը բերէր այն մարդկային փոշին, որը, թէև զինուորի հագուստով, զէնքը ձեռքին, բայց արդէն ձուլվել է սարսափահար ամբոխի մէջ։

«Եթէ իշխանութիւնը դեռ ևս չէ ստեղծել այնտեղ այն, ինչ անհրաժեշտ է, պէտք է շտապել։

«Հարկաւոր է նախ և առաջ ստեղծել ուժեղ իշխանութիւն և նրան իբրև յենարան ուղարկել կանոնաւոր զօրամաս այնպիսի անձնուէր մարդկանցից, ինչպիսիները [illegible] պատկերն իրանց Զօլօկում, Ցխինվալի մօտ, Սուխումում և Աբխազի ափին։ Մի խօսքով նրանցից, որոնց շարքերում էր հանգուցեալ Վալիկօ Շարաշիձէն։ Բակուրիանում պաշարողական դրութիւն պիտի յայտարարել և ամբողջ իշխանութիւնը կենտրոնացնել մէկի ձեռքում։ Նրա մօտ պիտի նշանակել քաղաքացիական մասի օգնական, որին և յանձնարարել հոգալու խնամատարութեան և պարէնաւորման խնդիրների մասին. դա անյետաձգելի է և յապաղելը կորուստի կը մատնի ահագին հարստութիւնը։

«Մասնաւոր շահի տեսակէտից մօտենալով, տեղական կօմիտէն որոշել է արգելել անասունների վաճառումը և այդ ձևով պահպանել անասունները փախստականների ձեռքում մինչև նրանց վերադառնալը իրանց նախկին բնակավայրերը։

«Պետական իշխանութիւնը շահագրգռված է ազգային հարստութեան պահպանումով, որովհետև եթէ նա չը փոխադրվի շուտով, կարող է ոչնչանալ։ Եւ որովհետև այդ բոլորը փոխադրելու համար ահագին փոխադրական միջոցներ ու ժամանակ է պահանջւում, ուստի աւելի լաւ կը լինի ազգաբնակութեան ընդարձակ խաւերը մասնակից անել այդ գնումներին։ Գոնէ անասունները կը մնան ամբողջ երկրի համար։ Այդ ուղին ձեռնտու է նաև փախստականների համար, որովհետև գնողների մեծ թիւ լինելով կը ստեղծվի մրցութիւն և անասունների գները կը բարձրանան։ Մինչդեռ այժմ գառան գինը 15—25 ռուբլի է, հորթ ունեցող կովը՝ 250 ռուբլի։

«Փախստականներին օգնելու համար պէտք է գործի կանչվեն բանւորական ույժեր։ Փորձված ինտելլիգենտ ույժերից պէտք է կազմվեն կոլլէկտիվներ քաղաքացիական մասի օգնականի շուրջը. այդպիսիները կարելի է գործի կանչել կօօպերատիվ ընթացող հիմնարկութիւններից, միայն թէ առանց ազգի խտրութեան։

«Ուրեմն պէտք է շտապել առաջին հերթում զինուորական ույժ ուղարկել պահպանելու թէ սահմանները և թէ փախստականներին։

«Երկրորդ՝ փախստականների խնամատարութիւնը, նրանց պարէնաւորելը և բժշկելը։

«Երրորդ՝ անասունների փոխադրութիւնը երկրի ներսը»։

---

*) Այս նկարագրութիւնը վերաբերում է յունիսի վերջերին։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱ

Հրատարակիչ՝

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԽՈՒՄԲ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
հիմնված 1880 թ.
([illegible])
Բաց է
Ամեն օր, բացի կիրակի օրերից
[illegible] խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԲԺԻՇԿՆԵՐԸ
Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն վեներական (սիֆիլիս) հիւանդութիւններ։
Վ. Ի. ՄԱԶՆԵՎ—9—10 ժ. միզային կազմի և կանանց հիւ.
Բ. Ի. ԱՂԱՍԱՐԵԱՆ—10 կէսից—12 կէս ժ. ներքին ջղային և երեխայոց հիւանդութիւն և ծաղկահատ։
Մ. Գ. ԱՐԵՏԻՍԵԱՆ—11 կէսից—1 կէս ժ. մորթի և վիրաբուժութիւն և վեներական (սիֆիլիս) հիւ.
Ց. Ա. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—12 և կէս—1 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւններ։
Խ. Գ. ԱՐԵՏԻՍԵԱՆ—9—11 ժ. մանկաբարձ. հիւ.
[illegible]
Ն. Օ. [illegible] վիրաբուժական.
Վճարը 1 ռ. [illegible]
[illegible]
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Մեդից. ֆակուլ. Ա. ԵՍԱՅԵԱՆԻ
Հիմնաւոր բժշկութիւն սուր և խրոնիքական տրիպէրի, շանկրի, սիֆիլիսի, սեռական թուլութեան, և այլ վեներական ցաւերի. Նորագոյն մէթոդներ և էլէքտրականութիւն։ Կաշուի տակ սրսկումներ, լուացումներ, վէրքի փաթաթումն, բանկա կպցնել, ծաղկահատութիւն։ Մասսաժ ձեռքով և էլէքտրականութեամբ։ Մանր հիւանդների մօտ գիշերային հերթապահութիւն։ Վօրոնցովի արձանի մօտ, Семеновская ул. № 9. Ընդունելութիւնը ամէն օր՝ 4—6 ժամը ճաշից յետոյ։
444 100—23

Անգլիերէնի դասեր
ԹԵՕՐԻԱ ԵՒ
ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ՄԵԾ ԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ։
Հարցնել «Մշակի» գրասենեակի կառավարչին.
518. 10—7

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ԲԺԻՇԿ Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ
1) Малокровіе и его леченіе 25 к.
2) Легочныя заболѣванія 25 к.
3) Гигіена женщины I часть 1 р.
4) Վեներական ախտեր 1 ր.
Ինչպէս վերոյիշեալ, նոյնպէս բոլոր ուրիշ բժշկական գրքոյկները ստանալ «Գուտտենբերգ» և «Գիր» գրավաճառանոցներից։
Պահեստը մեծաքանակ գնողների համար՝ Тифлисъ, Вознесенская ул. № 8. кв. Д-ра В.А. Хачатряна.
(Հ. հ. կ.) 297. 40—23

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
վաճառվում են
հետևեալ վիպական գրքերը.
1) Ջնիդ Քուսան, վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի 1 ր. 50 կ.
2) Իմնուն Եռէր, մեծ վէպ Վ. Հիւգոյի, թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . . . 2 ր. 25 կ.
3) Իտալիա, աստղագէտ. վէպ Կ. Ֆլամմարիոնի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . . . 2 ր. 25 կ.
4) Տասն եւ երկու պատմուածք, Շահրիարի . . . . . . — 75 կ.
5) Սևաւոր ոգին, վէպ. Յ. Սոլովեանի . . . . . . — 60 կ.
6) Գաբոյի բնակիչը, վէպ Թիֆլիսի կեանքից, Լեւոյի . . . — 90 կ.
7) Ժաhոս վէրեր, Նշաւերի . — 23 կ.
Վերոյիշեալ վճարով պատուէր չէ ընդունվում։
ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒԻ ՎՐԱ.
Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ
(4) 0—22

ПОЛНОПРАВНАЯ ГИМНАЗІЯ
Пріемъ въ V кл. безъ экзам. для конч. Торг. шк. и Высш. нач. уч.
ЛѢТНЯЯ ПОДГОТОВКА во всѣ классы съ азбуч. до 8 кл.
Лѣтніе Бухгалтерскіе Курсы
Пріемъ продолжается; курсъ заканчивается къ 15 августа
Завед. ИВ. ЗАХ. ТЕРЪ-СТЕПАНОВЪ. I Тумановская, д. № 13.
(Հ. հ. կ.) 512. 10—5

Типографія «ЭКОНОМІЯ» Тифлисъ